ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի ուսանողական գիտական ընկերությունը (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒԳԸ) հրավիրում է մասնակցելու «Գիտակրթական ոլորտի մարտահրավերներն ու հնարավորությունները» ուսանողական հանրապետական գիտաժողովին:

Գիտաժողովի նպատակն է խրախուսել և խթանել գիտության բնագավառում իրենց առաջին քայլերը կատարող հետազոտողներին: Միաժամանակ այն հնարավորություն է ընձեռում ուսանողներին, ասպիրանտներին և երիտասարդ գիտնականներին ակադեմիական լսարանին ներկայացնելու իրենց հետազոտության արդյունքները, կատարելագործելու գիտական աշխատանք կատարելու հմտությունները:

Գիտաժողովը տեղի կունենա 2025թ. ապրիլի 22-23-ին, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի 10-րդ հարկի նիստերի դահլիճում, զուգակցված՝ առցանց-առկա ձևաչափով: Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը և անգլերենը:

Գիտաժողովն անցկացվելու է՝ ըստ գիտության հետևյալ բնագավառների. ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական, տեխնիկական, գյուղատնտեսական, պատմական, տնտեսական, փիլիսոփայական, բանասիրական, իրավաբանական, մանկավարժական, հոգեբանական, բնապահպանական, քաղաքական, սոցիոլոգիական, աշխարհագրական, երկրաբանական:

Զեկուցումները, ինչպես նաև մասնակցության հայտը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով **մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը**՝ ուղարկելով հետևյալ հասցեին՝ sss@isec.am

Զեկուցումներին ներկայացվող պահանջներն են.

1. Գիտական զեկուցումը պետք է լինի մինչև 10 էջի սահմաններում՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, համակարգչային շարվածքով, **«GHEA Grapalat»** տառատեսակով, 1,15 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով, էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմանները՝ 1սմ:

2. Վերևում նշել վերնագիրը՝ 11 pt տառաչափով (մեծատառերով, **թավ՝ Bold**), այնուհետև հեղինակ(ներ)ի **ազգանունը, անունը (թավ)**, գիտական աստիճանը և կոչումը (եթե առկա է), զբաղեցրած պաշտոնը կամ ուսումնական հաստատությունը (սկսել նոր տողից), մեկ տող ներքև տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն, մեկ տող բաց թողնելով՝ 11 pt տառաչափով, շեղատառ (italic) և **թավ** բնագրի լեզվով ներկայացվում է զեկուցման ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ պետք է հակիրճ ներկայացվեն ուսումնասիրության առարկան, մեթոդները, հեղինակ(ներ)ի հիմնական եզրահանգումները, գիտական նորույթ պարունակող առաջարկությունները:

3. Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր**» **(թավ)** և նշել 5-6 բանալի բառեր:

4. Բաց թողնելով երկու տող՝ անհրաժեշտ է շարադրել աշխատանքը, 11 pt տառաչափով: Հղումները՝ տեքստում՝ ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի [3, էջ 15], մուգ:

5. Բնագրին հաջորդում է «**Օգտագործված գրականության ցանկ**»-ը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակի (ների) ազգանունը (ները) և անվան սկզբնատառը (երը), այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը,

ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը (Օր.՝ Հակոբյան Մ., Ստեփան Ոսկանյանը և նրա միջավայրը, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմ. ին-տ., 2005, 472 էջ): Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ՝ … // URL: https://www.example.am..., 14.06.2016)

6. Ներկայացվող զեկուցումները պետք է ունենան հստակ տրամաբանական կառուցվածք՝

ա) **ներածություն**, որում հիմնավորվում է ուսումնասիրման առարկայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության հիմնական նպատակը, տեսական և գործնական հիմքերը, առաջադրվող վարկածը,

բ) **հիմնական մաս,** որում վերլուծվում են հետազոտության թեմայով նախկինում կատարված գիտական հրապարակումները, արդի մոտեցումները, հեղինակ(ներ)ի կատարած ուսումնասիրությունը, տեսակետները,

գ) **ամփոփիչ մաս**, որը բովանդակում է հետազոտության արդյունքները՝ եզրահանգումները, տեսական և գործնական նշանակություն ունեցող առաջարկությունները, գիտական նորույթ պարունակող խնդրի լուծումը, հաստատված վարկածը, կանխատեսումները:

7. Զեկուցման վերջում 11 pt տառաչափով անհրաժեշտ է գրել հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը կամ ուսումնական հաստատությունը, հեղինակ(ներ)ի էլեկտրոնային փոստի հասցեն, ամփոփագիրը՝ 150-250 բառ, և **բանալի բառերը**:

8. Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերն անհրաժեշտ է հավաքել «Microsoft Equation Editor 3.0» ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները ներկայացնել նկարի տեսքով՝ 11 pt տառաչափով:

9. Անհրաժեշտ է ներկայացնել **կարծիք**՝ ներկայացվող գիտական զեկուցման մասին, կամ համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության **երաշխավորությունը**:

10. Ցանկության դեպքում զեկուցումը գիտաժողովին կարող եք ներկայացնել նաև տեսասահիկի ցուցադրմամբ:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ **060623519** (ներքին՝ 369 կամ 332) դեկանատ, 055517515, 043771720, 098957006 կամ գրել էլեկտրոնային փոստին՝ **sss@isec.am**

Մասնակցության համար լրացնել հետևյալ հայտադիմումը՝
https://forms.gle/VfciNLef8uqxmk9P7